600.0039.02.03.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

2 մարտի 2016 թվականի №39Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի №438Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի №25 և ի լրումն՝ 2016 թվականի հունվարի 14-ի №1, հունվարի 15-ի, փետրվարի 10-ի №7 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում** է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ԳՆԴԵՎԱՆՔ» փոքր հիդրո-էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №438Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0524 լիցենզիայի պայմանների՝

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 1500 կՎտ հաշվարկային հզորությամբ «ԳՆԴԵՎԱՆՔ» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:»,

2) 9-րդ, 31-րդ և 33-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

3) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. «ԳՆԴԵՎԱՆՔ» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 1630 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով.

1) հիդրոտուրբին №1՝ CJA 237-W-90/1*10, 1630 կՎտ, 2011թ.,

2) գեներատոր №1՝ SFW I 630-10/1180, 1630 կՎտ, 2011թ.:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
2 մարտի 2016թ.
ժամը 16^{00}